«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Արժեքային համակարգի ձևավորումը հայոց լեզվի գրականության դասաժամին

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Հարությունյան Քրիստինա

Ուսումնական հաստատություն՝ << ՀՀ Արարատի մարզի Հովտաշատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------2

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՎՈՐԵԼԸՈՐՊԵՍ ԱՐԺԵՔԱՅԻՆ

ՀԱՄԱԿԱՐԳ----------5

ԳԼՈՒԽ 2. ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՁևԱՎՈՐՎԵԼՈՒ ԸՆԹԱՑՔԸ----------8

2.1 Լեզվի և գրականության դերը մշակութային արժեհամակրգ ձևավորելու

գործընթացում----------10

2.2 Լեզուն և գրականությունը՝ ինքնաճանաչողական և սոցիալական

արժեհամակարգ ----------12

2.3 Լեզուն և գրականությունը՝ հոգևոր արժեքային համակարգ ----------13

ԳԼՈՒԽ 3. ԳՈՐԾՈՆՆԵՐ , ՈՐՈՆՔ ԱԶԴՈՒՄ ԵՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄՈՏ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ

ՁևԱՎՈՐՎԵԼՈՒՆ----------14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ----------19

Ներածություն

Արժեհամակարգերը, ձևավորվելով հասարակության մեջ, մեծ դեր են խաղում անհատի դաստիարակության գործում: Արժեքներ կարող են համարվել,սերը, ընտանիքը, երեխաները, տունը, մտերիմները, ընկերները, շփումը, նյութական բարեկեցությունը, ստեղծագործական ինքնադրսևորումները, սոցիալական կարգավիճակը և դիրքը հասարակության մեջ, ազատությունը, ինքնակրթությունը, հոգևոր արժեքները, հոգևոր աճը, կրոնը: Կարող են լինել նաև այլ արժեքներ: Տարբեր մարդկանց մոտ արժեքների գերակայությունը տարբեր է: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները լուծվում են ընտանիքում, ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Հարկ է նշել, որ դպրոցի գերխնդիրը ոչ միայն գիտելիք հաղորդելն է, այլ նաև անձ, անհատ ձևավորելը և արժեքային համակարգի ստեղծելը մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Մենք՝ ուսուցիչներս, պետք է դաստիարակենք վեհ և բարձր արժեքներ կրող քաղաքացիներ: Ուսուցման գործընթացում պետք է ձևավորենք սովորողների կրթական, դաստիարակչական, արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է գիտելիքներ ու կարողություններ, արժեքային որակներ, կամք և բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: Արժեհամակարգի ձևավորման և նրա կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Ճեշտը ցանկանում եմ դնել հայոց լեզվի և գրականություն առարկաների շրջանակներում ձևավորվող արժեհամակարգերի վրա, որովհետև անգնահատելի է լեզվի և գրականության դերը:Այստեղ ես անգնահատելի եմ համարում ուսուցչի դերը՝ ձևավորել գրագետ հայերենի իմացությամբ ու դրսևորմամբ հայ մարդ, քաղաքացի, անհատ:

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից կյանքում մշակութային, քաղաքական, սոցիալական փոփոխությունների հետ մեկտեղ փոխվում են նաև անձի արժեքները, աշխարհընկալումները, վարքաձևերը, ինչպես նաև աշխարհի, մարդկանց, բնության հետ հարաբերությունները: Այս տեսանկյունից այժմյան հասարակությունում ավելի արդիական են դառնում մարդու արժեքային կողմնորոշումները, մարդ- հասարակական փոխհարաբերություններ հասկանալու և վերլուծելու միտումը, արժեքների տեղը և դերը՝ որպես անձի ինքնության բաղադրիչներ դիտարկելը:

Մարդու կյանքում դպրոցական տարիքն այն շրջանն է, երբ դրվում են անձնային որակների, բարոյական զգացմունքների, գնահատումների հիմքերը: Ճանաչելով մարդու անհատական-հոգեբանական և տարիքային առանձնահատկությունները, իմանալով նրա կենսապայմանները՝ անհրաժեշտ է արդյունավետ կրթական միջավայր ստեղծել նրա իմացական ներուժի, ակտիվության, ունակությունների, օժտվածության, տաղանդի բացահայտման և զարգացման համար: Անհատական առանձնահատկությունների հաշվառումը և սովորողի բացառիկության, անկրկնելիության արժևորումը հումանիստական մանկավարժության հիմնարար սկզբունքներից են և անձնակենտրոն կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման հիմնական պահանջը:

Հայտնի է, որ դպրոցականի համակողմանի և ընդհանուր զարգացումը տեղի է ունենում գործունեության ընթացքում: Որպեսզի գործունեությունն իսկապես և լիարժեքորեն նպաստի երեխայի անձնավորության բազմակողմանի ձևավորմանը, հարկավոր է այն արդյունավետ կազմակերպել և ճիշտ ուղղորդել՝ ուսումնառության հիմքում դնելով հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կարողունակությունների վրա հիմնված մոտեցումը:Հայոց (մայրենի) լեզվի, գրականության, հայ գրականության դասավանդումը բացառիկ դեր ունի անհատի, պետականամետ հայ քաղաքացու արժեքային համակարգի, նրա բարոյական նկարագրի ձևավորման գործում:

Հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում մշակվում և ամրապնդվում է այն դիրքորոշումը, որ հայոց լեզուն՝ որպես ՀՀ պետական լեզու, անկախ պետականության պահպանման, զարգացման կարևորագույն երաշխիքն է, որն անփոխարինելի դեր ունի ինչպես հենց իր՝ սովորողի, այնպես էլ ողջ հայ ժողովրդի կյանքում: Մայրենի լեզվի, գրականության ուսումնասիրությունը ձևավորում է որոշակի վերաբերմունք և դիրքորոշում հայեցի ոգու, ազգային արմատների պահպանման և ամրապնդման համար, ինչպես նաև հնարավորություն է տալիս խորությամբ ընկալելու հայ մարդու արժեքային համակարգը, ժողովրդի կենցաղը, նիստուկացը, հավատալիքները, ավանդույթները, սովորույթները:

Ազգային ոգին և մշակույթը արժևորելու, գնահատելու, պահպանելու, հաջորդ սերնդին փոխանցելու պատրաստակամությամբ և գործուն մասնակցությամբ դաստիարակվում է հայրենասեր, պետական մտածողություն ունեցող, օրինապահ, բարեկիրթ, ներդաշնակ զարգացած անձնավորություն, որը պատրաստ է սովորելու ողջ կյանքի ընթացքում[1]:

<<Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը <<Հայոց (մայրենի) լեզու>>, <<Գրականություն>>, <<Հայ գրականություն>> առարկաների դասավանդման ընթացքում>> հետազոտական աշխատանքում փորձել ենք ներկայացնել արժեքային համակարգի ձևավորման գործընթացը, անձնավորության ձևավորման ընդհանուր հոգեբանական օրինաչափությունները դպրոցական տարիքում, սովորողների համակողմանի դաստիարակության, ներդաշնակ զարգացմանն ուղղված խնդիրները և դրանց կազմակերպման ձևերն ու մեթոդիկան:

Գլուխ 1.ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՎՈՐԵԼԸ՝ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

- Լեզվի մահն արագացնում է ժողովուրդների հոգևոր մահը:

Գարեգին Նժդեհ

Լեզուն մեր ժողովրդի ազգային գոյության ու էության հիմքն է: Ահա թե ինչու է կարևոր հայոց լեզու և գրականություն առարկաները սովորելը, ահա թե որն է այն բարձրագույն արժեքը,որը դաստիարակում է հայ մնալ, գնահատել ,արժևորել ազգային արժանապատվությունն ու պետական շահերը: Գրականության և լեզվի դասերը դառնում են լավագույն միջոցը աշակերտների մեջ լավը, գեղեցիկը, նվիրականը, արժեքավորը, մնայունը սերմանելու համար: Մենք՝ մանկավարժներս, գիտակցում ենք, թե ինչ դժվարին գործ է մեզ բաժին ընկել, որ ազգի ֆիզիկական և հոգևոր գոյությունը կախված է նաև մեզանից: Ո՞րն է այն շարժիչ ուժը, որ առաջ է մղում, պարտավորեցնում է կրել պատասխանատվություն ապագա սերնդի արժեհամակարգի ձևավորման համար, դա անմնացորդ սերն ու նվիրումն է աշխատանքի նկատմամբ, առողջ սերունդ դաստիարակելու նկատմամբ: Ուսուցիչը մեծ առաքելություն ունի. ոչ միայն տալ ուսումնական կրթություն այլև դաստիարակել հայրենիքին արժանի զավակ: Ինչպե՞ս մոտիվացնել աշակերտներին, ինչպե՞ս առաջացնել սեր ու պատասխանատվություն սեփական լեզվի,գրականության ու մշակույթի նկատմամբ:Այսօր այս հարցը հետաքրքրում է շատ մանկավարժների:

Ինչպես արդեն ասացի,կրթական տարբեր աստիճաններում արդեն ի հայտ են գալիս գործոններ,որոնք սխալ կերպ են անդրադառնում աշակերտի աշխարհայացի, արժեհամակարգի ձևավորմանը: Դեռահասների շրջանում, հատկապես տղաների, նկատվում է գաղափարական

նոր փոփոխություններ, նոր մտածելակերպ, նոր մոտեցումներ: Դրանցից պատճառ կարող են հանդիսանալ հեռուստատեսությունը,համացանցը, նեղ ընկերական շրջապատը, երբ դեռևս չձևավորված անհատը փորձում է նմանակել ազդեցիկ ընկերոջը, այս կամ այն ֆիլմի կամ սերիալի հերոսին, որպես կանոն, բացասականը ավելի հեշտ են ընկալում երեխաները և այսեղից էլ սկսած խաթարվում է դեռևս չձևավորված արժեհամակարգը: Այդ պատճառով ուսուցչի դերը աշակերտի կյանքում շատ ավելի մեծ է ու կարևոր: Ուսուցիչը գտնում է այնպիսի մեթոդներ, որը կհամախմբի բոլոր աշակերտներին մեկ գաղափարի կամ աշխատանքի շուրջ: Դրանք կարող են լինել դասի շրջանակներում արվող թիմային, խմբային աշխատանքներ, արտադասարանային ընթերցանության քննարկումներ, զրույց, առարկայական միջոցառումներ, կերպարի վերլուծություն, ճիշտ և սխալի դատավարություն, այդ ամենը կապել առօրյա կյանքի հետ, հարցադրումների միջոցով՝ իսկ ի՞նչպես կվարվեի ես, ի՞նչ կփոխեի, եթե կարողանայի, զարգացնել առողջ քննադատական և վերլուծական միտք, որը կօգնի աշակերտներին փնտրել և գտնել այնպիսի լուծումներ, որոնք կլուծեն, կկարգավորեն շատ խնդիրներ իրենց կյանքում:

Լեզու և գրականություն սովորելը՝ որպես արժեքային համակարգ: Սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակությունները

Լեզվագրագիտությունը՝որպես արժեքային համակարգ.

Լեզվական իմացությունը նշանակում է տվյալ լեզվի բառապաշարի, լեզվականև դարձվածքային միավորների իմացություն, բառակազմական ձևաբանական, շարահյուսական, ոճական, գրականագիտական գիտելիքների ձեռքբերում, լեզվի քերականության յուրացում:Արժեհամակարգի ձևավորման նպատակների մեջ, աշակերտը, շատ կարևոր է, որ տիրապետի,արժևորի գրագետ հայերեն լեզվով կամ օտար լեզուներով հաղորդակցվելու հմտությունները: Աշակերտը կարող է ունենալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այնպես նաև բացասական: Կրթական տարբեր աստիճաններում արդեն ի հայտ են գալիս գործոններ, որոնք սխալ կերպ են անդրադառնում աշակերտի աշխարհայացի, արժեհամակարգի ձևավորմանը: Դրանցից կարող են հանդիսանալ հեռուստատեսությունը, համացանցը, շփումը նեղ ընկերական շրջապատում, երբ դեռևս չձևավորված անհատը փորձում է նմանակել ազդեցիկ ընկերոջը և այլն: Ուսուցման գործընթացում, լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները:

Մայրենի լեզվով գրագետ բանավոր կամ գրավոր հաղորդակցվելը ընկալվում է որպես բարձրագույն արժեք, որովհետև լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք, կազմում է սովորելու և լեզվական հաղորդակցության հիմքը, որի հիման վրա կարող են ձևավորվել գրագիտության մյուս ձևերը՝ քաղաքացիական, բնապահպանական, տնտեսական, իրավական, առողջապահական, գիտատեխնիկական, թվային և այլն: Հայոց լեզվի և գրականության ուսուցման գործընթացում հանդիպում ենք տարբեր տիպի դասերի, որոնք ունեն իրենց տարբեր հիմքերը, ուսումնադաստիրակչական նպատակը: Դրանց հիմքում ընկած են հիմնական նպատակներ, որոնք արժևորում են ուղղագրություն, ուղղախոսություն, կապակցված խոսք, գրագետ հաղորդակցություն, ճիշտ ընտրված բառերի գործածություն, ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունների զարգացում, լեզվաքերականական գիտելիքները խոսքի կառուցման ընթացքում կիրառելու հմտության ձևավորում: Երբ սովորում ենք խոսքի մասերը, աշակերտների մոտ ձևավորվում է առարկա, հատկանիշ, թիվ գործողություն ցույց տվող բառերը տարբերակելու,խմբավորելու, ճիշտ գրության և կիրառության ձևերն իմանալու կարողություն: Հարստանում է սովորողի բառապաշարը և իմացության շրջանակը: Երբ ընտրում ենք բառախումբ, աշակերտները կարողանում են քերականական և իմաստավորման ճիշտ դասավորությամբ կազմել նախադասություն, ընդգծել գլխավոր և երկրորդական անդամները, առանձնացնել հոմանիշ, հականիշ, հարանուն, համանուն բառերը, կետադրել համր բնագրեր և բացատրել՝ ըստ պահանջվող կանոնների: Զարգանում է սովորողի բառը՝ որպես կառուցվածք ընկալելու, նրա գործառույթները՝ հոլովական, հոգնակիակերտ փոփոխությունները բանավոր և գրավոր խոսքում կիրառելու հմտություն: Երբ սովորում ենք հայոց լեզվի զարգացման փուլերն ու զարգացման ժամանակաշրջանները, աշակերտները կարողանում են տեքստում ճանաչել, ընդգծել, խմբավորել գրաբար, աշխարհաբար, միջին հայերեն լեզուներով նշված բառերը: Արժևորվում է մայր լեզվի իմացությունն ու պատկերավոր խոսքի զարգացումը: Երբ անցնում ենք հայերենի բարբառները, աշակերտները կարողանում են նշել բարբառներ, ընդգծում են նրանց նմանություններն ու տարբերությունները մայրենի լեզվի նկատմամբ, կարողանում են նշել որոշ բարբառների քերականական կառուցվածքն ու առանձնահատկությունները: Հարստանում է պատմական հայրենիքի ու մայրենի լեզվի իմացությունը: Նշված բոլոր դասերն ու աշխատանքները նպաստում են հայոց լեզվի իմացությանը, լեզվական գրագիտությանը, անհատի՝ որպես գրագետ մարդու բարձր գնահատանքին ու արժևորմանը: Դեռևս դպրոցում է ձևավորվում է ընկերների, ուսուցիչներիհետ շփման, հաղորդակցման բարեվարքությունը:Հայոց լեզվի ուսուցման կարևոր արժեքներց մեկը դա փոխադարձ շփումն ու բարեկիրթ հաղորդակցումն է: Աշակերտը կարողանում է լսել, ընկալել, բանավիճել, համարժեք վերաբերմունք արտահայտել և տրամաբանված խոսք կառուցել: Արժեքային կրթության ձևավորելու հիմքում ընկած է նաև հմտությունների ձևավորման սկզբունքը:

Գլուխ 2. Արժեհամակարգի ձևավորման ընթացը

Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում: Գրիգոր Զոհրապի կենսագրությունն անցնելիս, երբ աշակերտները ծանոթացան գրողի ողբերգական մահվան պատմությանը և այն փաստին,որ նա ուներ հնարավորություն փրկվելու և իր կյանքը շարունակելու արտասահմանյան որևէ երկրում, սակայն նախընտրեց մնալ ժողովրդի կողքին ու պայքարել հանուն հայրենիքի, ութերորդ դասարանի շատ աշակերտներ ճիշտ համարեցին գրողի որոշումը: Խմբային աշխատանքի ընթացքում ձևավորված բանավեճը, թե ինչպես կվարվեին իրենք գրողի փոխարեն, դասարանի մեծամասնությունն արտահայտեց կարծիք. այնպես, ինչպես Գրիգոր Զոհրապը: Այս դասը իր փոքրիկ ներդրումն ունեցավ ձևավորելու աշակերտի մեջ հայրենասիրություն, պատվախնդրություն, ապրումակցում մտերիմի, հարազատի, ընկերոջ նկատմամբ: Նար-Դոսի «Ես և նա» նորավեպն անցնելի աշակերտները զուգահեռներ անց կացրին «Ես»-ի և «Նա»-ի միջև: Մարդկային խառնվածքի ու բնավորության երկու տարբեր դրսևորումներ, երբ մեկը հուսահատությունից կորցնում է կյանքի նկատմամբ հետաքրքրությունը, անավարտ թողնում ուսումը, տանուլ է տալիս կյանքի պայքարը և կործանվում, մյուսը կյանքի հարվածներից չի հուսահատվում, կյանքի պայքարի մեջ իրեն հաստատելու պատրաստակամությամբ նա ստանում է երաժշտական կրթություն և դառնում է հանրաճանաչ երաժիշտ: Փափուկ կենցաղի սովոր «Ես»-ը կործանվեց հոգեկան հարվածից, իսկ փողոցում մեծացած «Նա»-ն ոչ միայն դիմացավ փորձությանը, այլև հաղթեց կյանքի դաժան պայքարում: Այս դասը նույնպես իր ներդրումն ունեցավ երեխաներիմոտ ձևավորելու արժեքներ՝ պայքարելու, չհանձնվելու դժվարություններին, մոտիվացվելու, ավելիին ձգտելու, հասնելու և գնահատելու: «Թմբկաբերդի առումը» պոեմն ամփոփելիս աշակերտները զեղեցիկ զուգահեռներ անց կացրին դրական ու բացասական կերպարների՝ Նադիր Շահի և Թաթուլի միջև, ովքեր մարմնավորում էին բարին ու չարը, քաջն ու վախկոտը, վաստակած հաղթանակն ու նենգ ձեռքբերումը: Դավաճանությունն ու դավադրությունը՝ որպես կործանանար իրողություն պոեմի հերոսների համար:



Այս դասը նույնպես իր փոքրիկ ներդրումն ունեցավ՝ երեխաների մոտ ձևավորելու հայրենասիրություն, բարոյական, մարդկային վեհ արժեքներ, որոնք կօգնեն իրենց առօրյա կյանքում ճիշտ որոշումներ կայացնելու, բարին գործելու, ընկերասեր լինելու, հայրենասիրությունը անձնական շահերից վեր դասելու:

Այսպես է մեզ հորդորում նաև մեծն ուսուցիչը՝ Խ. Աբովյանը՝ **Ծունչդ տո՛ւր, հոգի՛դ, բայց քո հայրենիքը մի տուր թշնամյաց:** Այսպիսի խոսքերը կարող են հայրենաճանաչողական դաստիարակչության խթան լինել ուսուցման ընթացքում, որովհետև ուսուցչի դերը աշակերտի կյանքում շատ ավելի մեծ է. աշակերտը վստահում է ուսուցչին ու կարևորում նրա խոսքը: Հայոց պատմության էջերը ողողված են հայրենասիրություն արժեքի դիմաց մեծ գին վճարած հայորդիներով, որոնց դաստիարակությունը սերմանել է նաև ուսուցիչը: Հուզական գործառույթը կարևոր դեր ունի նաև առօրյա շփումներում: Հուզական զգայունակությունը, կարեկցանքը, ապրումակցումը, անձի, այլոց նկատմամբ կարեկցական վերաբերմունքի դրսևորումներ են: Գթասրտությունն արտահայտվում է այլոց դժբախտության և խնդիրների նկատմամբ զգայուն վերաբերմունքի միջոցով: Կարեկցանքը անձի, այլոց զգացմունքների նկատմամբ համարժեք ապրումն է: Խոսքային ներգործության գործառույթը ենթադրում է որևէ մեկին որոշակի արարքի մղելու խնդրանք, հորդոր, Գրականության բոլոր թեմաներն անցնելիս ուսուցիչը ձևավորում է վերլուծական միտք, որ աշակերտն ինքնուրույն կարողանա հասկանալ ու վեր հանել ստեղծագործության ընդհանուր գաղափարը: Ինքնուրույն վերլուծությունը ենթադրում է առաջին հերթին երեխաների մասնակցություն, այսինքն՝ աշակերտները պետք է հնարավորություն ունենան ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը, զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու, ընկերների հետ քննարկելու, դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին, գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Թեմայում արծարծված խնդիրները կապել առօրյա կյանքի հետ և գտնել դրանց ճիշտ լուծման եղանակները: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն:

2.1 Լեզվի և գրականության դերը մշակութային արժեհամակարգ ձևավորելու գործընթացում:

Մշակույթը հիշողություն է, Հետևաբար, դա կապված է պատմության հետ, միշտ ենթադրում է մարդու, հասարակության եւ մարդկության բարոյական, մտավոր, հոգևոր կյանքի շարունակականություն: **Յու. Մ. Լոտման**

Մշակույթը, ինչպես ներկայացված է ասույթում, մի ամբողջ ժողովրդի մտավոր, բարոյական, ազգային, ժողովրդական հիշողությունն է, նկարագիրը, որտեղ իր կարևոր ու անմիջական տեղն ու դերն ունի լեզուն ու գրականությունը: Մեր մշակույթը դարերի պատմություն ունի: Այնքանով, որքանով դարերի պատմությանն ու մշակույթին ծանոթ ենք այսօր, մեծ դեր է վերապահվել լեզվին, որը սկզբում արվել է սեպագիր արձանագրությունների տեսքով այնուհետև գրքերի ստեղծումից մինչև այսօր անցնելով զարգացման երկար ճանապարհ, մշակվել է հղկվել, զարգացել և դարձել բարձրագույն արժեքներից մեկը ազգային մեկը ազգային մշակույթի ձևավորման գործընթացում : Ինչ է դաստիարակում մշակույթը… Այդ հարցին կանդրադառնանք գրականության դասին բանահյուսություն ուսումնասիրել, երբ << Հայկ և Բել>> առասպելը վերլուծելիս աշակերտները գեղեցիկ հոմանիշներով

կբնութագրեն Հայկ նահապետին՝ գեղեցիկ առնական, բարի, հայրենասեր,քաջ,արի ով հաղթում է չար, նենգ Բելին և ազատագրում տարածքը, որը մեր պատմական հայրենիքն է: Հայկ նահապետը հերոսական վարքի դրսևորման օրինակ է դարձել սերունդների համար: Հենց այդ սերունդները դարձան մեր նախահոր գաղափարների կրողը. չհանձնվելու, պայքարելու անկախ լինելու գիտակցությունը:Աշակերտներն արժևորում են մեր բանահյուսությունը, պատմության հերոսական էջերը, արտահայտում են սեփական կարծիքը լսածի, կարդացածի, զգացածի վերաբերյալ: Հայրենասիրության բարձրագույն արժեքին զուգահեռ է ընթանում հոգևոր մշակութային արժեքների պահպանումը: Նարեկացի ուսումնասիրելիս աշակերտների մոտ ձևավորվում է աստվածային կատարելությանձգտող մարդու ինքնաճանաչման, ինքնամաքրման, ապաշխարության ձգտելու, ներելու բարձրագույն արժեքներ: Ընդհանրական հարցումների միջոցով աշակերտները ներկայացնում են, թե ինչու է ներելու կարևորությունը անհրաժեշտ միջանձնյա հարաբերություններում, բայց պատմական կարևոր իրադարձությունների պահին անգամ շինականն է զենք վերցնում, հոգևորականն է պայքար մղում հանուն ազգի անվտանգության ու բարեկեցության. Եղիշե՝ «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին»: Աշակերտները կարևորում են հայ մշակույթի տեղն ու դերը համաշխարհային մշակույթում և համաշխարհային մշակույթի դերը համամարդկային արժեքների համատեքստում: Կարևորվում են իր՝ հայկական և համաշխարհային պատմամշակութային արժեքների ժառանգորդ լինելը և ցուցաբերի պատասխանատու վերաբերմունք դրանց

պահպանման գործում: Դրսևորում են հարգալից և հոգատար վերաբերմունք ազգային և համաշխարհային արվեստի արժեքների նկատմամբ, ցուցաբերի մշակույթի իմացություն և դրա հետ հաղորդակցվելու ձգտում: Աշակերտները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Նրանք արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ունեն Հայաստանի աշխարհագրության, հասարակական-քաղաքական համակարգի և պատմության հիմնարար իմացություն: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ: Մեզ համար կարևոր առաքելություն է դարձել աշակերտների մեջ ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Լեզվի և գրականության դերը ժողովրդավարական արժեհամակարգ ձևավորելու գործընթացում

- Մի մարդ ցանկանում էր ժողովրդավարություն հաստատել իր երկրում: Մարդիկ նրան ասեցին՝ սկզբից ժողովրդավարություն հաստատիր քո տանը:Որքանով է լեզուն ու գրականությունը ձևավորում աշակերտի մեջ ժաղովրդավարական գիտակցություն ու արժեքային համակարգ,նորից անդրադառնանք ութերորդ դասարանում անցկացրած մեր դասին, որտեղ ուսումնասիրեցինք Գրիգոր Զոհրապի կյանքը: Ունենալով իրավաբանի մասնագիտություն՝ հանդես է գալիս հրապարագրական հոդվածներով, արծարծում Հայկական հարցը: Դառնում է հայ ժողովրդի շահերի պաշտպան, ջատագով, ում կյանքն էլ
իմաստավորվել էր Հայկական հարցը հանրայնացնելով: Ապրելով մի երկրում, ուր

գրականության էջերը ողողված են նմանատիպ օրինակներով: Այս օրինակներով է

ձևավորվել մեր արժեհամակարգը,այսպես է ուսուցիչը ձևավորում աշակերտի մեջ մարդու

իրավունքների նկատմամբ հարգանքն ու բարեվարքությունը, ինչպես սեփական

ժողովրդի,այնպես էլ բոլոր ժողովուրդների նկատմամբ: Նման օրինակների միջոցով է ուսուցիչը դաստիարակում աշակերտին՝ լինել ազնիվ, գթասիրտ ,արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ, լինել սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, ազգային արժեքների կրողն ու պահապանը, գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում, հասարակության մեջ, լինի նախաձեռնող, հարգի մարդու իրավունքները, լինի հայրենասեր, արժևորի թե՛ սեփական, թե՛ ուրիշների

ազատությունները, առաջնահերթությունը համարի սեփական քաղաքացիական պարտքը հայրենիքի նկատմամբ:

2.2 Հայոց լեզուն և գրականությունը՝ ինքնաճանաչողական և սոցիալական արժեքային համակարգ

Այն ամենը, ինչ մեզ դուր չի գալիս ուրիշների մեջ, թույլ է տալիս հասկանալ ինքներս մեզ:

- Այն ամենը, ինչ նյարդայնացնում է ուրիշների մեջ, կարող է բերել ինքնաճանաչման:
- Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, որտեղ ձևավորվում է նոր կյանք, նոր ճակատագիր: Դպրոցը պայքարում է հանրության մեջ տարածված շատ բացասական երևույթների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել: Ուսումնառության ընթացքում աշակերտները ունենում են թե՛ ուրախություն, թե՛ դժվարություններ, թե՛ հաղթանակներ: Այս բոլոր ձեռքբերումները անցնում են մի կարևոր ճանապրհով, որ կոչվում է ինքնաճանաչողություն: Հայոց լեզվի և գրականության դասերը հագեցած են վերլուծություններով, ուսումնասիրություններով, որոնք տանում են աշակերտին ինքնաանդրադարձի,ինքնաճանաչման:Օրինակ՝ Շիրվանզադեի «Արտիստը» ստեղծագործությունը աշակերտին հնարավորություն է տալիս ինքնուրույն մտածել: Այստեղ արտահայտված են մարդկային նվիրական երազանքներն ու ձգտումները, զգացմունքները, որոնք խաթարվում են որոշ հանգամանքների պատճառով: Ընթերցումից հետո աշակերտը գտնում է կապը իր տված պատասխանների և ստեղծագործության գաղափարի միջև: Սա հնարավորություն է տալիս, որ աշակերտը պատմությունը կարողանա կապել առօրյա կյանքին, որը նպաստում է ճանաչողական մտածողության զարգացմանը: Այն հարցերին, թե վերջում ինչպիսի՞ հանգուցալուծում կառաջարկեն իրենք, հնչեցին տարբեր կարծիքներ, ապա ընդհանրություններ գտան Մուրացանի «Հասարակաց որդեգիրը» պատմվածքի գլխավոր հերոսի հետ: Հնչեցին արդարացնող և դատապարտող կարծիքներ, աշակերտները անդրադարձ կատարեցին դեպի սեփական անձը, իսկ ի՞նչ կանեին իրենք՝ հայտնվելով հերոսների փոխարեն: Այս դասը իր փոքրիկ ներդրումն ունեցավ աշակերտների մեջ ձևավորելու ինքնաճանաչողական, արժեք, որը սոցիալական ճիշտ հարաբերություններ կկառուցի, կդրսևորի ազնվություն, հարգանք անկախ տարիքից, սեռից, ազգությունից ու սոցիալական կարգավիճակից, կունենա ընկերակցելու ունակություն, կոնֆլիկտների խաղաղ կարգավորման հմտություններ: Կբացատրի կոնֆլիկտների ազդեցությունը միջանձնային և միջխմբային հարաբերությունների վրա, կկիրառի կոնֆլիկտների խաղաղ լուծման տարբեր ձևեր՝ ըստ անհրաժեշտության: Կարողանա հավասարակշռել և ներդաշնակել իր զգացմունքները, ցանկությունները, կարիքները, նպատակները, հակումները: Նրանք ձևավորում են վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ և հաջողությամբ կառավարում են սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները, կարողանում են դրսևորել առողջ և անվտանգ կենսակերպ, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշում:

2.3 Լեզուն և գրականությունը՝որպես հոգևոր արժեքային համակարգ.

Մեր ազգային լեզուն, որ դարերից ի վեր պահել է իր մաքուր, անխարդախ հնչակությունն ու հարստությունը, պահել իբրև սրբազան ավանդ, մեր ազգի գոյության ու կենսունակության գերագույն փաստն է՝ հակառակ ահավոր փոթորիկների, որ եկել ու անցել են մեր երկրով: Լեզուն հայ ինքնության երաշխավորն է, հավատը՝ որպես հոգևոր հայրենիք: Քրիստոնեական ազգային արժեքային համակարգի ձևավորումը, անցնելով դարերի ու հազարամյակների միջով, ձգվում է մինչև մեր օրերը: Այդ ընթացքում, ինչպես ցույց է տալիս մեր ժողովրդի պատմությունը, ձևավորվեցին և վերջնականապես կայացան ազգային քրիստոնեական հիմնարար արժեքները, որոնք կազմում են հայ մարդու աշխարհայացքի առանցքը: Ազգային արժեհամակարգը մեր ժողովրդին հնարավորություն է տվել պահպանելու իր հայրենիքը, լեզուն, հավատը, մշակույթը, ազգային ինքնագիտակցությունը և վերականգնելու անկախ պետականությունը: Պատմության ողջ ընթացքում հայ ժողովուրդը պայքարել է ինքնության, հավատի, ազատության համար: Եղել են ժամանակներ, երբ կորցրել է անկախությունը, այդ պայմաններում հայոց լեզվի, մշակույթի, ազգային բոլոր արժեքների պահպանումն իր վրա է վերցրել հայոց եկեղեցին: Մենք ունենք հարուստ գրականություն, որն արդեն իսկ բարձրագույն ազգային ու մշակութային արժեք է: Մեծ է ուսուցչի դերը այս ամենը սերմանելու, աշակերտների մեջ ձևավորելու հոգևոր արժեքներ: Այստեղ մեզ օգնության են գալիս պատմագրության ուսուցումը: Նախ ուսուցիչը ներկայացնում է պատմական ժամանակաշրջանը, երբ ուսուցչի առաքելությունը կատարում էին հոգևոր այրերը: Աշակերտները ծանոթանում են Ագաթանգեղոսի

«Հայոց պատմությանը»՝ հայերի քրիստոնեություն ընդունելու պատմական կարևոր իրադարձությունը, Եղիշեի «Վարդանի և հայոց պատերազմի մասին»՝ հավատի , կրոնի ուազատության համար մղված ճակատամարտը, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» ավանդազրույցների, հայոց պետականության կորստի «Ողբ»-ի մասին: Արժևորում են դարերի ընթացքում դժվարությամբ ձեռք բերված ազատությունն ու անկախությունը: Կրում են պատասխանատվություն մեզ ավանդածը պահելու և հանձնելու սերունդներին: Այս և նման դասերը ձևավորում են աշակերտի մեջ բարոյականություն, պատվախնդրություն, պատասխանատվություն և ձևավորում են մարդ անհատ, հայրենասեր քաղաքացի:

ԳԼՈՒԽ 3. ԳՈՐԾՈՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱԶԴՈՒՄ ԵՆ ԱՇԱԿԵՐՏԻ ՄՈՏ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ ՁԵՎԱՎՈՐՎԵԼՈՒՆ

Միայն աշատանքի վերջում ենք մենք սովորաբար իմանում, թե ինչից էր պետք այն սկսել: Նշեմ մի քանի գործոններ, որոնք ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն կարող են ունենալ աշակերտի մոտ արժեհամակարգ ձևավորվելու գործընթացում: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները:

- Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»:
- Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային առանձնահատկությունների: Այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում, ապրելու ունակության ձևավորելն է»:
- Մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդ որում՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնազավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: Ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ինչպես ընտանիքում, այնպես էլ ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Աշխարհի մասին պատկերացումները, բարոյական հայացքները և համոզմունքները, մտածելակերպը

աշխարհայացքը, հետաքրքրությունները, ձգտումները և արժեքները պայմանավորվում են խմբային գիտակցության առանձնահատկություններով, որում անձը ձևավորվում է և որում ընթանում է նրա առօրյա գործունեությունը Դեռահասը վաղվա արժեքների կրողն է, ուստի կարևոր է այսօր արդեն նրան ներարկել առողջ արժեքներ, ապագայի հասարակության համար պատրաստել հայրենասեր, քաղաքակիրթ քաղաքացիներ:

Լեզուն ու գրականությունը՝ որպես բարոյականության և հայրենասիրության արժեք

Բարոյականության գլխավոր պայմանը բարոյական դառնալու ցանկությունն է:

Սենեկա Կրտսեր

Հայրենիքից զատ, Հայրենիքից դուրս ինձ համար խաբուսիկ են բոլոր դրախտները:

Գարեգին Նժդեհ

Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը և չի հակասում դրանց: Անբարոյական է այն ամենը, ինչը դեմ է արժեքներին և բերում է դրանց քայքայման: Ցանկացած հասարակության մեջ անբարոյական է դավաճանությունը միայն այն պատճառով, որ այն արժեզրկում է խոստումը: Եթե խոստումն արժեք չլինի, մարդկանց համակեցությունը կվերածվի մղձավանջի, քանի որ կվերանա փոխադարձ վստահությունը: Երբ փլուզվում են արժեքները, տարածվում է անբարոյականությունը: Մարդիկ դժբախտանում են, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար վնասել: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Հայոց լեզու և գրականություն առարկաների շրջանակներում շատ են թեմաները, որոնք վեր են հանում խնդիրները, մեկնաբանվում են թե՛ աշակերտների, թե՛ ուսուցիչների կողմից, արտահայտվում են կարծիքներ, առաջարկվում են խելամիտ լուծումներ: Հայ գրականությունը հարուստ է այնպիսի հեղինակներով, որոնց ստեղծագործությունները տարիներ շարունակ կրթության մեջ օգնող, աջակցող դեր են ունեցել ապագա սերունդներին դաստիարակելու, կրթելու համար: Ուսուցչի վարած դասերի ընթացքում հայրենասիրության թեման մեծ հետաքրքրություն պիտի առաջացնի աշակերտների շրջանում:

Այդպիսի արժեք են ներկայացնում բարոյախրատական առակները, ասացվածքները, հեքիաթները: Անգնահատելի է առարկաների դերը անհատի դաստիարակության ու ձևավորման,չարն ու բարին ընկալելու գործում: Առակներն այլաբանորոն,ոչ ուղղակի կերպով աշակերտին բարոյական խրատ են ուղղում՝ դաստիարակելով խոհեմություն, ազնվություն և արդարություն, աշխատասիրություն, համեստություն: Երեխան հասկանում է, որ առակի հերոս հերոս կենդանիները, բնության երևույթները կերպարանափոխված մարդիկ են: Շատ ավելի դյուրըմբռնելի ու պարզ է դառնում առակի հիմնական մտքի վերհանումը աշակերտների կողմից, եթե աշխատանքը զուգորդվում է առակի թեմային

վերաբերող առածների, ասացվածքների կիրառմամբ: Ուսուցչի դիրքորոշումը, ձգտումն է՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ: Սերը երեխաների նկատմամբ՝ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակության բարձրացման կարևոր պայմաններն են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անդրադարձ կատարելով հետազոտությանս վերլուծությանը՝ գալիս եմ եզրահանգման, որ

- ✓ Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները լուծվում են ինչպես ընտանիքում,
- ✓ այնպես էլ ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով:

- ✓ Ուսուցչի դիրքորոշումը, ձգտումն է՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, սերը երեխաների նկատմամբ ՝ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակության բարձրացման կարևոր պայմաններն են:
- ✓ Գրականության և լեզվի դասերը դառնում են լավագույն միջոցը աշակերտների մեջ լավը, գեղեցիկը, նվիրականը, արժեքավորը, մնայունը սերմանելու համար:
- ✓ Դեռահասը վաղվա արժեքների կրողն է, ուստի կարևոր է այսօր արդեն նրան ներարկել առողջ արժեքներ, ապագայի հասարակության համար պատրաստել հայրենասեր,
- ✓ քաղաքակիրթ քաղաքացիներ:

- ✓ Ազգային արժեհամակարգը մեր ժողովրդին հնարավորություն է տվել պահպանելու իր հայրենիքը, լեզուն, հավատը, մշակույթը, ազգային ինքնագիտակցությունը և վերականգնելու անկախ պետականությունը: Մեծ է ուսուցչի դերը այս ամենը սերմանելու և աշակերտների մեջ ձևավորելու հոգևոր արժեքներ:
- ✓ Ուսուցման գործընթացում, շնորհիվ արհեստավարժ մանկավարժների, լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Մայրենի լեզվով գրագետ բանավոր կամ գրավոր հաղորդակցվելը ընկալվում է որպես բարձրագույն արժեք,որովհետև լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք, կազմում է սովորելու և լեզվական հաղորդակցության հիմքը, որի հիման վրա կարող են ձևավորվել գրագիտության մյուս ձևերը:
- ✓ Հայոց լեզվի լեզվի ուսուցման կարևոր արժեքներց մեկը դա փոխադարձ շփումն ու բարեկիրթ հաղորդակցումն է: Աշակերտը կարողանում է լսել, ընկալել, բանավիճել
- ✓ համարժեք վերաբերմունք արտահայտել և տրամաբանված խոսք կառուցել: Արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ՝ մեզ համար կարևոր առաքելություն է դարձել աշակերտների մեջ ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

- ✓ Աշակերտի մեդիագրագիտությունը պետք է օգտագործել ի նպաստ ուսումնառության,որ կարողանա ստեղծել մեդիա բովանդակություն և կարողանա տարածել իր ասելիքը մեդիայի տարբեր հարթակներում՝ գիտակցելով դրա հետևանքներն ու ազդեցությունը,պահպանելով էթիկան և համացանցից օգտվելու անվտանգության կանոնները:
- ✓ Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, որտեղ ձևավորվում է նոր կյանք, նոր ճակատագիր:
- ✓ Դպրոցը պայքարում է հանրության մեջ տարածված շատ բացասական երևույթների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել:
- ✓ Հայոց լեզվի և գրականության դասերը հագեցած են վերլուծություններով, ուսումնասիրություններով, որոնք տանում են աշակերտին ինքնաանդրադարձի, ինքնաճանաչման:
- ✓ Հայոց լեզվի և գրականության ուսուցման գործընթացում հիմնական նպատակները արժևորում են ուղղագրություն,ուղղախոսություն, կապակցված խոսք, գրագետ հաղորդակցություն, ճիշտ ընտրված բառերի գործածություն, ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունների զարգացում, լեզվաքերականական գիտելիքները խոսքի կառուցման ընթացքում կիրառելու հմտության ձևավորում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/document
2. Առարկայական չափորոշիչներ. https://escs.am/am/search 2. Հանրակրթության պետական չափորոշիչ. h
3. Ս. Ա. Մարության, Ա.Մ.Դալլաքյան, Նախադպրոցական մանկավարժություն
4. Վ.Ա. Կրուտեցկի, Մանկավարժական հոգեբանության հիմունքները, <<Լույս>>հրատարակչություն, Երևան 1976
5. Գարեգին Նժդեհ, «Հատընտիր», Երևան, Ամարաս, 2006թ.:
6. Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ., N1/2, էջ 6-15: 7. Գարեգին Նժդեհ
7. Համացանցային նյութեր